ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ «ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԻ ԵՐԻՑ ԱՄԱՑ Ի ՏԱՃԱՐՆ» ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 նոյեմբերի 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ահավասի՛կ, Տիրոջ աղախինն եմ,
թող քո խոսքի համաձայն լինի ինձ»
(Ղուկ. Ա. 38):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Ղուկասի ավետարանի այս խոսքերը Մարիամի պատասխան են հրեշտակին՝ արտահայտելով խոնարհություն, Աստծուն ծառայելու անմնացորդ պատրաստակամություն: Նա, ով մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մայրն էր դառնալու, իրեն անվանեց աղախին՝ հնչեցնելով իր հնազանդության խոսքը:

Ամեն տարի՝ նոյեմբերի 21-ին, Հայ Եկեղեցին տոնում է Ս. Աստվածածնի՝ երեք տարեկանում տաճարին ընծայվելու տոնը: Աստվածաշնչից գիտենք, որ Նա ծագում էր Դավթի ցեղից, բարեպաշտ Հովակիմի ու Աննայի դուստրն էր: Ամուսինները զավակներ չէին ունենում, չնայած որ բավականին տարիքով էին: Սակայն Աննան չէր դադարում կորցնել հույսը եւ շարունակ աղոթում էր Աստծուն՝ վստահ լինելով, որ Տիրոջ համար անկարելի ոչինչ չկա: Աստվածապաշտ ծնողները Մարիամի ծնունդը հրաշք համարեցին եւ հրեական սովորույթի համաձայն՝ որոշեցին երեխային ընծայել Աստծուն: Աստվածամոր ծննդյան եւ նրա՝ տա-

ճար մուտք գործելու իրաղարձությունը մեզ՝ քրիստոնյաների համար մեծ նշանակություն ունի: Այս է պատճառը, որ Հայ Եկեղեցին հատուկ հանդիսավորությամբ է նշում այդ օրը:

Այսպիսով, Նա երեք տարեկան էր, երբ ընծայվեց տաճարին՝ իր կյանքն անցկացնելով ջերմեռանդ աղոթքներով: Մարիամին տաճարին նվիրելով՝ Տերը ցանկանում էր կրկին փառավորել իր ժողովրդին: Նա անբիծ էությամբ մնաց տաճարում՝ զարգանալով շնորհներով եւ իմաստությամբ, պարկեշտությամբ, առաքինությամբ եւ վայելչությամբ:

Սուրբ Կույսն իր կյանքն անցկացրեց առ Աստված խոհարհությամբ ու նվիրումով: Այդ պատճառով էլ բոլոր կանանց մեջ հենց Նա ընտրվեց իբրեւ Աստվածամայր: Հեզաբարո պատրաստակամությամբ ընդունեց հրեշտակի ավետիսը, տվեց Աստծուն հավատարիմ լինելու իր խոստումը՝ դրանով իսկ սրբագործելով մարդկային ցեղի՝ Հիսուսով փրկագործվելու բանաձեւը:

Սիրելինե՛ր, Նա, ով իրեն համարում էր Տիրոջ աղախին, դարձավ մայր սրբության, տաճար խնդության: Նա չերկնչեց ոչ մի բանից, քանզի անվարան հավատով ապավինել էր Աստծուն: «Իմ անձը կը փառաւորի Տիրոջը, եւ իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստուծով» (Ղուկ. Ա. 46). այս խոսքերը դարձնելով իրեն ուղեկից՝ Աստվածամայրն ապրեց սրբակենցաղ կյանքով՝ «օրհնյալ լինելով բոլոր կանանց մեջ»:

Ուրեմն թող փառավորվի Կույս Մարիամը այսօր եւ միշտ, հավիտյանս հավիտենից. ամեն: